



Անի

Nr.17

Ani

Մխիթարեան Սաներու
լուրերը
Հոկտեմբեր

Nachrichten der Freunde
der Mechitaristen

2011

Oktober

Հրատարակիչ. Ա.Ունանեան

Herausgeber: A. Unanyan

**ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ 200-ԱՄՅԱԿԻՆ
ՆՈՒԻՐԻԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

ԾՐԱԳԻՐ

10-11 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԵՐԵՒԱՆ

ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի նիստերի
դահլիճ, 1-ին հարկ, Մարշալ Բաղդասարեան պող., 24/4

հոկտեմբերի 10, երկուշաբթի

Գիտաժողովի բացման արարողութիւն

Բացման խոսք Հրանուշ Հակոբեան – ՀՀ
սփիւռքի նախարար



Ողջոյնի խոսքեր և ուղերձներ Տեր Նաթան եպս. Յովհաննիսեան – Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Վլադիմիր Բարխուդարեան – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ. դոկտոր, պրոֆեսոր

Առաջին նիստ (12:30 – 13:45)

Զեկուցումներ

Հ. Պողոս ծ.վ. Գոճանեան՝ – Վիեննայի Մխիթարեան
Միաբանութեան արքայապետ

«Մխիթարեան Միաբանութեան անցած ուղին»

Բարբարա Դենշեր՝ – լրագրող (Վիեննա)

«Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան տպարանի
պատմութիւնը»

Գևորգ Տեր-Վարդանեան՝ – Մատենադարան

«Հայերեն ձեռագրերի վիեննական հաւաքածուն և Տաշեանի մեթոդը»

Հայր Սերովբէ վրդ. Չամուրլեան՝ – Մխիթարեան կրթահամալիրի
տնօրէն

«Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան դպրոցների կրթական
առաքելութիւնը»



Երկրորդ նիստ (14:15 – 15:15)

Աշոտ Մելքոնեան՝ – ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտ

«Հայաստանի ժողովրդագրութեան հարցերի արտացոլումը Յակովբոս Տաշեանի աշխատութիւններում»

Մուրադ Հասարթեան՝ – ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ

«Հայ ճարտարապետութեան հիմնահարցերը «Հանդէս ամսօրեայի» էջերում»

Էմմա Կոստանդեան՝ – ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտ, պ.գ.դ.

«Մխիթարեանների երկու յոբելեանները 19-րդ դարի սկզբներին (1901-1911թթ.)»

Գայանէ Մխիթարեան՝ – ՀՀ ԳԱԱ Լեզուի ինստիտուտ, բ.գ.թ.

«Մխիթար Սեբաստացին երաժիշտ և երգահան»



Երրորդ նիստ (16:15 – 17:00)

Ալեքսան Յակոբեան՝ – ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, պ.գ.թ.

«Հայր Ներսես Ալիկեանը և Ներսես Դասխուրանցու «Աղուանից պատմության» ուսումնասիրությունը»



հոկտեմբերի 11, երեքշաբթի Առաջին նիստ (10:30 – 11:30)

Ավիկ Իսահակեան՝ – ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղեանի անվան գրականության ինստիտուտ

«Ավետիք Իսահակեանի ձեռագրերի հալածումն Վիեննայի Մխիթարեան Միաբանության դիվանում»

Մերժ Սրապիոնեան՝ – ԵՊՀ դասախոս, բ.գ.թ.

«Մխիթարեան Միաբանության գործունեության գնահատականը Միքայել Նալբանդեանի կողմից»

Հայր Մեսրոպ Թովալեան՝ – Մխիթարյան Միաբանության վարդապետ

«Հայր Յակովբոս Տաշեան»

Ստելլա Վարդանեան՝ – Մատենադարան

«Վիեննայի Մխիթարեան Միաբանության աշխատանքները միջնադարյան բնագիտական աշխատությունների հետազոտման ասպարեզում»

Գայանե Պողոսեան՝ – ԵՊՀ, կենսաբանական գ.թ.

«Վիեննայի Մխիթարեանների կենսաբանական բնոյթի հրատարակությունները»



Երկրորդ նիստ (12:00 – 13:00)

Վարդան Դերիկեան՝ – ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անվան գրականության ինստիտուտ, բ.գ.թ.

«Հայ գեղարվեստական գրականությունը Վիեննայի Մխիթարեան Միաբանության տպագրություններում»

Վլադիմիր Պողոսեան՝ – ՀՀ սփիւռքի նախարարություն, փ.գ.թ.

«Մխիթարեան Միաբանության դերն ու նշանակությունը Սփիւռքում»

Անահիտ Բաղդասարեան՝ – ԳԱԱ Արևեստի ինստիտուտ, արևեստագիտության թեկնածու

«Այտրնեան Բոհմ /Bohm/ երգեցողությունը Սրբոյ պատարագի»

Փիրուզա Մնացականեան՝ – Կրակովի Յագելոնեան համալսարանի ասպիրանտ

«Լեհահայ Մխիթարեանների գործունեությունը»



Կլոր-Սեդան (ամփոփում) «Վիեննայի Մխիթարեան Միաբանության աւանդը հայագիտության զարգացման մեջ»
Վարդոյ՝ Հայր Պողոս Ժ.Վ. Գոճանեան

Վիեննայի Մխիթարեան Միաբանության կազմավորումը,

կրթական կյանքը, հրատարակությունները եւ ձեռագրականագիտական ժառանգությունը

Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան 200-ամեակին նուիրուած գիտաժողովի մասնուլեան արձագանգներ

Կայացաւ Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան 200-ամեակին նուիրուած միջազգային գիտաժողովի բացումը

<http://www.azator.gr/armenia-karabakh/1012---200----->

Չորեքշաբթի, 12 Հոկտեմբեր 2011
Հոկտեմբեր 10-ին ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի նիստերու դահլիճին մեջ տեղի ունեցաւ ՀՀ սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ եւ ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի ու Մխիթարեան Միաբանութեան մասնակցութեամբ կազմակերպուած Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան 200-ամեակին նուիրուած միջազգային գիտաժողովի բացումը:

Ներկայ էին ՀՀ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը, ԵՊՀ ռեկտոր Արամ Միմոնեանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն Տէր Նաթան եպս. Յովհաննիսեանը, ՀՀ ԳԱԱ պատմութեան, լեզուի, գրականութեան, արուեստի եւ արեւելագիտութեան ինստիտուտներու, Մատենադարանի եւ ԵՊՀ գիտնականներ եւ ուրիշներ: Գիտաժողովին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանեցին Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան արքահայր ծ. վրդ. Հայր Պօղոս Գոճանեանը, լրագրող Պարպարա Դենշերը (Աւստրիա), Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւնէն Հայր Վահան վրդ. Յովակիմեանը, Լիբանանէն Մխիթարեան Միաբանութեան վարդապետ Հայր Մեսրոպ Թովալեանը, Կրակովի Եազելոնեան համալսարանի ասպիրանտ Փիրուգա Մնացականեանը (Լեհաստան): Բացման խօսքին մէջ ՀՀ սփիւռքի նախարար Հ. Յակոբեանը նշեց, որ Մխիթարեան



կեդրոնները միաժամանակ եւ մշակութային, եւ հայագիտական, եւ գիտական, եւ կրթական հաստատութիւններ են: Շնորհակալութիւն յայտնելով Մխիթարեան Միաբանութեան անդամներուն՝ նախարարը բարձր գնահատեց Մխիթարեաններու դերը հայապահպանութեան, հայագիտութեան, հայ մշակոյթի զարգացման եւ պահպանման գործով: Հ. Յակոբեանը նշեց, որ Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան մէջ կը գտնուի թերթերու եւ հայկական դրամներու ա-մենախոշոր հաւաքածոն, ինչպէս նաեւ

առաջին հայկական եռագոյնը: Նախարարը նաեւ ընդգծեց, որ 20-ամեայ անկախ Հայաստանի Հանրապետութիւնը պէտք է զօրակցի եւ աջակցի, որ յաւերժ մնան Վենետիկի եւ Մխիթարեան

Վիեննայի Միաբանութիւնները: Հայրենանուէր եւ ազգանուէր գործունէութեան համար Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան արքահայր ծ. վրդ. Հայր Պօղոս Գոճանեանին Հ. Յակոբեանը պարգեւատրեց ՀՀ սփիւռքի նախարարութեան «Վիլիամ Սարոյեան» մետալով, իսկ հայանրպաստ գործունէութեան համար լրագրող Պարպարա Դենշերը (Աւստրիա) պարգեւատրուեցաւ ՀՀ սփիւռքի նախարարութեան պատուոյ զիրով: Տէր Նաթան եպս. Յովհաննիսեանը գիտաժողովի մասնակիցներուն փոխանցեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջոյնի խօսքը եւ մաղթանքը:

70 տարի Հայաստանը, հայրենիքի դռները փակ էին մեզ համար

<http://hayernaysor.am/1318489431>

13.10.2011 Պողոս Գոճանյան

Վիեննայի Մխիթարյան Միաբանության 200-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Մխիթարյան



միաբանության արքահայր, ծայրագույն վարդապետ Հայր Պողոս Գոճանյանին հայրենանվեր և ազգանվեր գործունեության համար պարգևատրեց ՀՀ սփյուռքի նախարարության «Վիլյամ Մարտյան» մեդալով:

Գիտաժողովին Հայր Պողոսը հանդես եկավ «Մխիթարյան միաբանության անցած ուղին» զեկույցով և ներկայացրեց Մխիթար Սեբաստացու կյանքն ու գործունեությունը, ինչպես նաև Մխիթարյան միաբանության անցած փառավոր ուղին:

Վիեննայի Մխիթարյան միաբանության Թանգարանում և Գրադարանում պահվում են հայկական մշակութային արժեքներ, որոնք հնարավորություն են տալիս ծանոթանալու հայի անցյալի հոգեմտավոր հարստություններին:

Վիեննայի Մխիթարյան միաբանությունում են գտնվում հայկական դրամների, թերթերի ամենամեծ հավաքածուները, այնտեղ է գտնվում Հայոց առաջին եռագույնը: Հայր Պողոս Գոճանյանի հետ զրուցել է «Հայերն այսօրի» թղթակիցը.

- Հոգևոր և մտավոր զարգացումը եղել է Մխիթարյան միաբանության գլխավոր նպատակը, և բոլորը ծառայել են այդ նպատակին:

Բոլոր ժամանակներում մեծ կարևորություն է տրվել հայագիտական



աշխատանքներին, հատկապես Վիեննայի Մխիթարյան միաբանությունում, թեև Վենետիկում էլ այլ կարևոր գործեր են արվել՝ հին գրականության հրատարակություն, օտար, դասական գրականության թարգմանություն գրաբարով: Վերջիններս կարևոր աշխատանքներ էին հայ ժողովրդի համար հատկապես այն ժամանակ, երբ դեռ շատերը դպրոց չէին տեսել. կարևոր էր, որ նրանց մեջ ուսումնական սեր և գրական ճաշակ արթնանա:

Շատ կարևոր է նաև ամեն ինչին քննական հայացքով մոտենալը, իրականության վեր հանումը: Ամեն ինչի մեջ պետք է ոչ թե ազգային նպատակ հետապնդել, այլ գիտական: Պետք է ամենուր ճշմարտություն փնտրել. այդ է պատճառը, որ մեր թերթը՝ «Հանդես ամսօրյան», ամենի առաջ բաց է. ով ինչ ուզում է՝ կարող է գրել, բայց դա պետք է լինի գիտական աշխատանք, պետք է աղբյուրները ճշգրիտ լինեն:

Այստեղ տարիներ առաջ Քրիստոնեական համայնագիտարան տպագրվեց. ինձ ասել

էին, որ «Հանդես ամսօրյայի» մասին հոդված պատրաստեմ. պատրաստեցի, հոդվածն ուղարկեցի: Հետո ինձ հարցրին, թե թերթի ուղղությունը ո՞րն է. ես պատասխանեցի, որ թերթի ուղղությունը գիտությունն է, ճշմարտությունը. ով ինչ ցանկանա, կարող է գրել, բայց պետք է գիտական հիմնավորված փաստերով խոսի:

- Հա՛յր Պողոս, Վիեննայում Մխիթարյան միաբանության հոբելյանը նշվե՞լ է:

- Մեկ ամիս առաջ Վիեննայի Մխիթարյան միաբանության 200-ամյակը նշեցինք Վիեննայում. հասարակությունը գերմանախոս էր, և մենք ամեն ինչ գերմաներենով արեցինք:

Մեզ համար ավելի կարևոր էր, որ Միաբանության հոբելյանը նշվի Հայաստանում, և ուրախ եմ, որ մեր փափագը կատարվեց: Գիտաժողովը կազմակերպելու նախաձեռնությունը ՀՀ սփյուռքի նախարարությունը վերցրեց իր ձեռքը, և ես ուզում եմ շնորհակալություն հայտնել ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին:

- Հա՛յր Պողոս, Ձեր զեկույցի ժամանակ նշեցի՞ք, որ Միաբանությունն այսօր մի շարք խնդիրներ ունի:

- Երբ հայ ժողովուրդն իր կրած մշակութային այլափոխումից հետո վերածնունդ ապրեց, ապա այդ վերածնող ուժն անշուշտ Մխիթարյան միաբանությունն էր: Բայց ցավոք, այսօր այն չէ, ինչ 50 կամ 100 տարի առաջ էր, և պատճառները բոլորիս են հայտնի. 70 տարի Հայաստանը, հայրենիքի դռները փակ էին մեզ համար, և մեր գործունեությունը միայն Սփյուռքում էինք ծավալում:

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Հայաստանից ունեինք հոգևորականներ, բայց հետո՝ ոչ:

11 տարի առաջ Վենետիկի և Վիեննայի Միաբանությունները միացան, և երկուսը

միասին այսօր 26 վարդապետ ունեն, որը Միաբանության պատմության մեջ ամենաքիչ թիվն է. Եղեռնից առաջ մոտ 100 վարդապետ կար. 50-ը՝ Վենետիկում, 50-ը՝ Վիեննայում:

- Մենք Երևանի Ավան թաղամասում կրթահամալիր ունենք. այն պետական ծրագրով գործող դպրոց է: Սակայն եթե սաներն ավարտելուց հետո փափագ են ունենում շարունակելու իրենց ուսումը, հետևելու մեզ, նրանց ուղարկում ենք Վենետիկ՝ իմաստասիրական և աստվածաբանական բարձրագույն



ուսումնարաններում պատրաստվելու: Վենետիկում արդեն Հայաստանից 3 երիտասարդ են ուսանում:

- Հա՛յր Պողոս, դուք մասնակցեցի՞ք նաև Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողովին: Ինչպե՞ս կգնահատեք այն:

- Որպես առաջին շարժում՝ գովելի է: Բայց որպեսզի համաժողովները գործնական արդյունք ունենան, պետք է պարբերաբար, առանձին նյութերի վերաբերյալ ավելի փոքր խմբերով աշխատել: Մեկ ժամում հայ մշակույթի խնդիրների մասին խոսել անկարելի է: Եվ կցանկանամ, որ նման քննարկումները հաճախակի լինեն:

Հարցազրույցը՝ **Լուսինե Աբրահամյանի**

Մխիթարեան միաբանութիւնը՝ հայ ստեղծագործ մտքի հրաշք

<http://cl.hayernaysor.am/1318424865>

12.10.2011 Վարդան Դերիկեան

Հոկտեմբերի 10-11-ը տեղի ունեցած
Մխիթարեան միաբանութեան 200-ամեակին

նուիրուած միջազգային
գիտաժողովին մասնակցում էր
նաեւ Մատենադարանի աւագ
գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ Մ.
Աբեղեանի անուան
գրկանութեան ինստիտուտի
փոխտնօրէն Վարդան

Դերիկեանը: Նրա հետ գրուցել է «Հայերն
այսօրի» թղթակիցը:

**-Պարո՛ն Դերիկեան, կայ կարծիք, որ այս
գիտաժողովը բացառիկ է իր
բովանդակութեամբ, իր կարեւորութեամբ:**

-Ես կարծում եմ, որ այս գիտաժողովի
արժանիքը ոչ թէ իր բացառիկութեան մէջ է,
այլ ընդգրկունութեան մէջ է, որովհետեւ
ներկայացնում է Վիեննայի Մխիթարեան
միաբանութիւնն իր բոլոր դրսեւորումներով
եւ ամենակարեւորը՝ զուգահեռներ են
անցկացում Վենետիկի Մխիթարեան
միաբանութեան հետ, ցոյց
տալիս նրանց տարբերակիչ
առանձնայատկութիւններն ու
դրսեւորումները՝
պայմանաւորուած թէ՛
գերմանական միջավայրով,
որտեղ Վիեննական միաբանութիւնն էր
գործում, եւ թէ՛ իտալական ռոմանտիզմի
յեղափոխականութեան միջավայրով, որը
կար Վենետիկում:

-Մայ առաջի՛ն նմանատիպ գիտաժողովն է...

-Ո՛չ, սա առաջին գիտաժողովը չէ, առաջինը
նուիրուած էր Վենետիկի Մխիթարեան
միաբանութեան հիմնադրման 300-
ամեակին:

Փառք Աստծոյ, որ այսօր զոյգ
միաբանութիւնները գործում են որպէս
միասնական մէկ միաբանութիւն, ինչն իր
երէկուայ բովանդակալից ելոյթում



կարեւորեց նաեւ Սփիւռքի նախարար
Հրանոյշ Յակոբեանը:

Մաղթենք, որ այդ միաբանութեան
միասնականութիւնը
տարածուի նաեւ մեր
կեանքում:

**-Լէոն 18-րդ դարի եւ 19-րդ
դարի առաջին կէսն
անուանում է Մխիթարեան
դար...**

-Այո՛, Լէոն այդպէս է

բնութագրել այդ ժամանակաշրջանը հայի
կեանքում: 19-րդ դարի երկրորդ կեսերից
իրավիճակը փոխուում է՝ պայմանաւորուած
աշխարհական զարգացմամբ: Արդէն
խաղաղութիւն է հաստատուում Արեւելեան
Հայաստանում, Էջմիածինը մտնում է իր
դերի մէջ, հայ երիտասարդները գնում են
սովորելու եւրոպական կենտրոններում:
Կարելի է ասել՝ հայկական նոր
վերածնութեան հիմքը թէ՛ լեզուի, թէ՛
գրականութեան, թէ՛ պատմագրութեան եւ

թեք բնագրերի հրատարակման
բնագաւառում զցուած էր:

Մխիթարեանները հայ ժողովրդի
պատմութիւնը

վերայայտնագործեցին մեր
ժողովրդի համար. նրանք

ներկայացրին այն, ինչ

մոռացուած ու թաղուած էր մեր վանքերի
նկուղներում: Ամէն ինչ հանուեց,
սիստեմաւորուեց, դասակարգուեց. սա մի
նոր մղում դարձաւ նաեւ հայկական միւս
կենտրոնների համար, եւ ստեղծուեց
դրական առումով մի մրցակցութիւն:
Մխիթարեան միաբանութիւնը հայ
ստեղծագործ ոգու լաւագոյն
արտայայտութիւններից մէկն է: Հայը,
խաղաղ քաղաքակրթութեան որեւէ
անկիւնում լինելիս, միշտ էլ հասնում է
ստեղծագործ մտքի հրաշքների:

Զրուցեց **Կարինէ Աւագեանը**

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐՈՒ 200-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ԱԻԱՐՏԵՑԱԻ

http://kantsasar.com/index.php?option=com_content&view=article&id=1602:--200---&catid=66:new-news

Saturday, 15 October 2011 09:32 KANTSASAR

Հոկտեմբեր 11-ին, ՀՀ Սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ, ԳԱԱ պատմութեան ուսումնարանին ու Մխիթարեան Միաբանութեան մասնակցութեամբ կազմակերպուած Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան 200-ամեակին նուիրուած միջազգային գիտաժողովի ծիրէն ներս, կայացաւ կլոր սեղան մը: «Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան աւանդը հայագիտութեան զարգացման մէջ» թեմայով: Կլոր սեղանի մասնակիցները քննարկեցին Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան կազմաւորման, կրթական կեանքին, հրատարակութիւններուն եւ ձեռագրականագիտական ժառանգութեան առնչուող հարցեր: Անդրադառնալով Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւններու արխիւային հարուստ նիւթերը ուսումնասիրելու անհրաժեշտութեան՝ Հայաստանի ԳԱԱ պատմութեան ուսումնարանի տնօրէն Ա. Մելքոնեան շեշտեց այդ նիւթերը սղագրելու կարեւորութիւնը՝ անհրաժեշտութեան պարագային անոնցմէ օգտուելու նպատակով: Յառաջիկային պիտի հրատարակուի

Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան 200-ամեակին նուիրուած միջազգային գիտաժողովի նիւթերու ժողովածուն:



Կայացավ Վիեննայի Մխիթարյան Միաբանության 200-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի բացումը

<http://www.mindiaspora.am/am/News/1675>
2011-10-10

Հոկտեմբերի 10-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում կայացավ ՀՀ սփյուռքի նախարարության, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և Մխիթարյան Միաբանության համատեղ կազմակերպած Վիեննայի Մխիթարյան Միաբանության 200-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի բացումը:

Ներկա էին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Տեր Նաթան եպս. Հովհաննիսյանը, ՀՀ ԳԱԱ պատմության, լեզվի, գրականության, արվեստի եւ արեւելագիտության ինստիտուտների, Մատենադարանի եւ ԵՊՀ գիտնականներ և այլք: Գիտաժողովին մասնակցելու նպատակով Հայաստան են ժամանել Մխիթարյան Միաբանության աբբահայր Հայր Պողոս Ծ. վրդ.Գոճանյանը (Վիեննա), լրագրող Բարբարա Դենշերը (Ավստրիա), Մխիթարյան Միաբանության վարդապետ Հայր Վահան Հովակիմյանը (Վիեննա), Մխիթարյան Միաբանության վարդապետ Հայր Մեսրոպ Թովայանը (Լիբանան), Կրակովի Յագելոնյան համալսարանի ասպիրանտ Փիրուզա Մնացականյանը (Լեհաստան):

Բացման խոսքում ՀՀ սփյուռքի նախարար Հ.Հակոբյանը նշեց, որ Մխիթարյան կենտրոնները միաժամանակ և մշակութային, և հայագիտական, և գիտական, և կրթական հաստատություններ են: Ծնորհակալություն հայտնելով Մխիթարյան Միաբանության անդամներին՝ նախարարը բարձր գնահատեց Մխիթարյանների դերը հայապահպանության, հայագիտության, հայ

մշակույթի զարգացման և պահպանման գործում: Հ.Հակոբյանը նշեց, որ Վիեննայի Մխիթարյան Միաբանությունում է գտնվում թերթերի և հայկական դրամների ամենախոշոր հավաքածուն, ինչպես նաև առաջին հայկական եռագույնը: Նախարարը նաև ընդգծեց, որ 20-ամյա անկախ Հայաստանի Հանրապետությունը պետք է զորակցի և աջակցի, որ հավերժ մնա Մխիթարյան Միաբանությունը:

Հայրենանվեր և ազգանվեր գործունեության համար Մխիթարյան Միաբանության աբբահայր Հայր Պողոս Ծ. վրդ.Գոճանյանին Հ.Հակոբյանը պարգևատրեց ՀՀ սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարոյան» մեդալով, իսկ հայանպաստ գործունեության համար լրագրող Բարբարա Դենշերը պարգևատրվեց ՀՀ սփյուռքի նախարարության պատվոգրով:

Տեր Նաթան եպս. Հովհաննիսյանը գիտաժողովի մասնակիցներին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կթողիկոսի ողջույնի խոսքը և մաղթանքը: Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Բարխուդարյանը:

Ողջույնի խոսքերին հաջորդեցին զեկույցները՝ «Մխիթարյան Միաբանության անցած ուղին», «Վիեննայի Մխիթարյան Միաբանության տպարանի պատմությունը», «Հայրենի ձեռագրերի վիեննական հավաքածուն և Տաշյանի մեթոդը», «Վիեննայի Մխիթարյան Միաբանության դպրոցների կրթական առաքելությունը», «Հայաստանի ժողովրդագրության հարցերի արտացոլումը Հակովբոս Տաշյանի աշխատություններում» և այլն: